


# Բանաստեղծ, թարգմանիչ Գագիկ Դավթյանը տարեկան է 65



«Անլուելի զանգակատուն» պոեմի առաջին հրատարակության ընծայագիրն է սա, որին հաջորդեց դպրոցահասակ պատանու եւ համազգային փառքի զագաթը հասած բանաստեղծի նամակագրական կապը, ապա նաեւ՝ «պոլիտեխնիկցի» երիտասարդ բանաստեղծին հասցեագրված նրա «Ողջերթի խոսքը», որ ավարտվում է ընթերցողներին ուղղված հորդորով. «Եկեք հիշենք Գագիկ Դավթյան անուն-ազգանունը (այսինքն՝ կարդանք նրա գրածները) եւ դրանով իսկ շնորհալի երիտասարդին ստիպենք արդարացնելու իմ եւ ձեր հույսերը...»:

Այստեղից է սկսվում կյանքի շատ տարիները հայրենի եզերքին նվիրաբերած Կապանի պատվավոր քաղաքացու, այսօր արդեն 65-ամյա ճանաչված բանաստեղծի եւ վաստակաշատ թարգմանչի ճանապարհը, որ, ըստ էության, միտված է եղել կյանքից անժամանակ հեռացած բանաստեղծի հավատի եւ հույսերի ծանր «պարտամուրհակները» մարելուն:

Անդադրում որոնումների ու ոգորումների ճանապարհ է դա, որ բացառապես ինքն է հարթել համառ տքնանքով ու պատվախնդրորեն, հաճախ արհամարհելով «բաց ճակատով հաստ պատերին զարկվելու» ստույգ վտանգը, որից զգուշացնում էր Սեւակն իր նամակներից մեկում. «Պետք չէ, սիրելիս, ճակատդ ափսոս է - «էլի պատը կմնա պատ, կպակասի մի լավ ճակատ»»:

Դժվար է Գ. Դավթյանի ճանապարհն ամփոփել կենսագրական սովորական կադապարների մեջ՝ ծնվել է... սովորել է... ավարտել է... ծառայել է... աշխատել է... եւ այլն: Այլապես չպիտի կարողանալինք գոնե արձանագրել, որ նա, ՀԿԿ շրջկոմում աշխատելու տարիներին, իր բնօրրանի պատմական, հայեցի տեղանունները, այդ թվում՝ օտարահունչ Դավանի Կապան անունը վերականգնելու ըմբոստ պահանջատերն ու առաջին զանգահարը եղավ: Հեշտ է այսօր տեղի-անտեղի հոլովել մեր ազգամովեր մեծերի անունները, բայց նա էր, ով «հորհրդային Հայաստան» թերթում հանդես եկավ իր համազորացու՝ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի կյանքն ու գործը ոգեկոչող լայնածավալ հրապարակումներով այն հեռավոր օրերին, երբ մարդիկ տակավին վախվորած շշուկով էին տալիս նրա անունը: Ամեն ինչ չես թվարկի: Մանավանդ՝ ինքը դրա կարիքը չունի: Եվ եթե հիշատակեցինք այս երկու դրվագները, ապա 20-30 տարեկան այն երիտասարդների համար, որոնց հավաքական անունն է անկախության սերունդ: Սերունդ, որ ոչ իր մեղքով, դեռեւս անհաղորդ է մնում մեր ոչ վաղ անցյալի նույնիսկ լուսեղեն էջերին: Բայց սա բոլորովին ուրիշ խոսակցության նյութ է: Հավելենք ինչպե՛ս, որ առանց հետադարձ հայացքի առաջընթաց քայլերը կմնան օդում:

Գագիկ Դավթյանի ճանապարհի յուրաքանչյուր հանգրվանը մի նոր սկիզբ է նշանավորել: Վկա նրա հիշատակները հայրենի Դավթբեկի դպրոցում, վկա Արցախյան պատերազմի ծանր տարիներին գործունեությունը «Հայաստանի Հանրապետություն» թերթի հիմնադիր խմբագրակազմում, վկա «Սյունիք» թերթը, որի հիմնադիր գլխավոր խմբագիրն է եղել եւ վերջապես վկա՝ այն պատկառելի ժառանգությունը, որ մերօրյա հայ գրականության ժառանգության սեփականությունն է այլեւս, ասել է թե՛ բոլորիս սեփականությունը:

Շնորհակալ ենք, սիրելի բարեկամ: Ծնունդը շնորհավոր:

«Սյունյաց երկիր»

## ՆԱՍԱԿՆԵՐ «ՍՅՈՒՆՅԱՅ ԵՐԿՐԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ



### Մի ուրիշ հայրնություն էր Գ. Դավթյանի թարգմանիչը

Նախ գիտեի որպես բանաստեղծ, որի հետ Սեւակը մեծ հույս էր կապում: Պոեզիան գիտեի «անձամբ», իրեն՝ հեռակա:

Ծանոթացանք 90-ականների ամենասկզբում, երբ իրեն վստահվեց նորաստեղծ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի տարածաշրջանային թղթակցի դժվար ու պատասխանատու պաշտոնը: Այսօր էլ, երբ թերթում են օրաթերթի հավաքածուները, համոզվում եմ, թե ինչքան առաջ էր տեսնում «ՀՀ» սեփ. թղթ. Գագիկ Դավթյանը:

Մի ուրիշ հայրնություն էր Գագիկ Դավթյանի թարգմանիչը՝ Թագոր, վրացական պոեզիա...

Բայց անակնկալ էր, որ պոետը, իմ ընկերը, գործընկերը 65 տարեկան է:

Իսկ սա արդեն ոչ թե հայտնություն է, այլ զարմանք:

Գագիկից ինչ ասես կարելի է սպասել...



### Լույսի պոեզիա

Գագիկ Դավթյանը՝ ինքնատիպ բանաստեղծը, հրաշալի թարգմանիչը եւ տոհմիկ հայրողին ամբողջական երեւույթ է: Ահա այս կուռ եռամիասնության մեջ պետք է փնտրել այն առեղծվածը, թե ինչու եւ ինչպե՛ս ո՛չ ժամանակի ավերիչ հողմերը, ո՛չ էլ նորացող դարն ու հասարակարգը դուրյան-ինչ չխաթարեցին արժեքային այն համակարգը, որի երդվյալ որդեգիրն ու քարոզիչն է նա: Եվ հենց ճակատագիրը պիտի հոգար, որ գրական ճանապարհի օրհնությունը նա ստանար Մեծն Պարոյր Սեւակից, որը տվյալ դեպքում պատասխանատվության վիթխարի բեռ էր փոխանցում նրան՝ թե՛ քաղաքացուն, թե՛ իրեն ստեղծագործողի՝ ինքնադրսետրվելու հայ արդի քնարերգության խտաբնակ անդաստանում:

Եվ Գագիկը կարողացավ ոչ միայն ինքնադրսետրվել, այլեւ ինքնահաստատվել՝ միանգամայն ուրույն ասելիքով ու ասելածեով: Ավելին՝ նա հավելեց իր թարգմանական փառաեղ հատորյակները, սքանչելի հայերենով վերստեղծելով հոգեհարազատ գրողների բնագրերը եւ դառնալով լիիրավ համահեղինակ:

Իմ համոզմամբ՝ Գագիկ Դավթյանի գիրը, անգամ դառնահեծ ու հուսահատ տողերում, լույսի պոեզիա է: Լույս, որ ճառագում է քաղաքացի գրողի մարդկային կերպարից:

Հիրավի՝ արտացոլքի եւ անդրադարձումների բացառիկ լուսեղեն կենսագրություն:

### ՏԻՐԱՆ ՖԱՐՄԱՆՅԱՆ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի գլխավոր խմբագիր

### ԼԵՎՈՆ ԱՆԱՆՅԱՆ Հայաստանի գրողների միության նախագահ

Ներդրի փառագրությունը հովանավորել է «Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ փոօրեն Մաքսիմ Հակոբյանը, ում շնորհակալություն է հայտնում Գագիկ Դավթյանը:

# Կարծիքներ Գագիկ Դավթյանի մասին



## ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Չգիտեմ, թե շնորհալի բանաստեղծ Գագիկ Դավթյանն ինչպե՞ս է ուսանում պոլիտեխնիկական ինստիտուտում, բայց բանաստեղծության «ինստիտուտում» նա

լավ է ուսանում: Անճամբ ես հետևում եմ նրա ստորագրությանը լույս տեսնող բանաստեղծություններին (նույնիսկ թարգմանություններին) եւ պարզ նկատում եմ նրա աճը:


Նա, որ բոլորովին գեր է հավուրպատշաճության ցավից (ինչպես իր սերնդակիցների մեծագույն մասը), միաժամանակ չունի այն բովանդակազերծությունը, այն (թող թույլ տրվի ասելու) «ոչ մի բան չասել»-ությունը, որից տառապում են իր սերնդակիցներից շատերը՝ երեւի մոռանալով, որ լույս մի մոլորակ է մարդը խոսում՝ բան ասելու նպատակով, իսկ եթե գրում է՝ առավել եւս: Չէ՞ որ բանաստեղծի գործը, վերջ է ի վերջո, նման է հեռագիր կամ նամակ գրելուն, այն տարբերությունը, որ սրա հասցեատերը ինչ որ մի անհատ է, այլ մտերիմների բազմահազար մի բազմություն:

Վրո՞ւ ո՞ւմ մտքով կանցնի հեռագիր տալ կամ նամակ գրել, եթե չկա դրա անհրաժեշտությունը, այսինքն՝ մի կարելու, մի անհետաձգելի ասելիք: Եվ ո՞ւմ մտքով կանցնի հեռագիր տալ կամ նամակ գրել այնպես, որ հասցեատերը... ոչի՞նչ չհասկանա: Այսպես է կյանքում:

Գրականության մեջ էլ կան այսպես պիտի լինի, կան ոչինչ էլ չպիտի լինի (եւ չի՞ լինելու):

Գ.Դավթյանի մեջ, ահա՛, ինձ դուր է գալիս նրա այն ձգտումը, որ ուզում է բան ասել եւ ասել այնպես, որ բան հասկացվի:

«Գարուն» 1970, N5



## ՈՒՐԵՆ ԶԱՐՅԱՆ

Սիրելի Գագիկ Դավթյան, Ստացա «Մենախոսություն» գրքուկը: Եվ կիրակիս նվիրվեց ընթերցանության: Կարդալիս հաճույք ունեցա հասկանալու Ձեզ, Ձեր հոգին ու միտքը, գուցե ավելի միտքը, քան հոգին: Որո՞ւ էջեր մի քանի անգամ կարդացի եւ ունեցա ուրախ մի ապրում, որ Դուք ոչ ոքի նման չեք, մտածում եք պարզ, չեք կաշկանդում Ձեզ եւ ինչ էլ

տարափն տրվելով՝ նա ոչինչ զգալու չի պահում իր մեջ, անկեղծաբան է մինչև այլևս ասելիք չունենալը եւ այդպես կենդանացնում երկու անձանոք մարդկանց միջև: Ընկած մեռյալ տարածությունը: Իր մենախոսական տարերքի մեջ ընկնելով՝ նա դիմացիին հետ սկսում է խոսել սիրուց ու կյանքից, հայրենիքից ու պատմությունից եւ իր չափով բովանդակություն հարդորել հազարամյա խոսքին: Ապրումը տարածվում

որ գրում եք, միշտ հարազատ մնալով Ձեր ասելիքին, բան չափածոյի դարեր ի վեր ընդունված կարգ ու կանոնին: 30 հունիսի 1980թ.



## ՎԱՅԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

Սիրելի Գագիկ, թեև նամակներ գրել չեմ սիրում, բայց չեմ կարող թեզ չպատասխանել: Եվ ամնիջպես եմ պատասխանում: Եթե մի փոքր

հետաձգեմ, գիտեմ, չեմ գրի: Ինչպես մեր հանդիպման ժամանակ ասացի, գիրքը հավանել էի, հավանել էի իր բնականության, պարզության ու ջերմության համար:

Եվ, ճիշտն ասած, թեզ տեսնելուց հետո գիրքը առավել հավանեցի...

Գիտե՞ս ինչու... Դու եւ գիրքը շատ նման էիք իրար, երկուսդ էլ՝ պայծառ, բնական... Չգիտեմ, քո ցույցն ընկավ գրքիդ վրա, թե՛ հակառակը, բայց դուք երկուսդ իմ մեջ միացաք ու ամբողջացաք: Գիտես, ինչ մեծ բան է, երբ մարդ նման է իր գրածին, նշանակում է չի ստում, նշանակում է կեցվածք չի ընդունում: Իսկ սուտն ու կեցվածքը պոեզիայի ոխերիմներն են...

Գագիկ ջան, ես թեզ շատ, շատ հավանեցի: Քեզանից լույս էր ճառագայթում, նաեւ՝ համեստություն, նաեւ՝ բարոյություն... Եթե երեւանում լինեիր, թեև մեր տարիքների տարբերությամբ, մենք ընկերներ կլինեիրք...

11 մայիսի 1981թ.



## ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Քնարական ապրումների բանաստեղծ է Գ.Դավթյանը, նրա մեջ նրբությունը գուցակցված է ուժին, մեղմությունը՝ թափին ու եռանդին: Խոսքի

տարափն տրվելով՝ նա ոչինչ զգալու չի պահում իր մեջ, անկեղծաբան է մինչև այլևս ասելիք չունենալը եւ այդպես կենդանացնում երկու անձանոք մարդկանց միջև: Ընկած մեռյալ տարածությունը: Իր մենախոսական տարերքի մեջ ընկնելով՝ նա դիմացիին հետ սկսում է խոսել սիրուց ու կյանքից, հայրենիքից ու պատմությունից եւ իր չափով բովանդակություն հարդորել հազարամյա խոսքին: Ապրումը տարածվում

է ամբողջ բանաստեղծության վրա, բայց առանձին տողերում, որոնք դառնում են խոսքի ծանրության կենտրոնը, ձեւ ու կերպարանք են առնում խոհի տեսքով: Ապրումը լուծվում է բառերի մեջ, իսկ խոհն իր մեջ ապրում է խոսացում: Եվ ամբողջ բանաստեղծությունը դառնում է այսպիսի մի ձեւակերպում: «Օրերն իրար տված (խոստումներն են դրժում), ինչքան միայն, օ, կյանք, չես հանդուրժում...»:

Բանաստեղծը շատ լավ գիտի կարելու մի բան՝ այն, որ «մեր մարդկային բանականության (ստվերն ապրում է) իրերի խորքում»: Այս դեպքում պիտի ենթադրել, որ բանականության լույսն ապրում է մարդկային հոգում, որն իրերի միջից իր փորձի ապացույցն է հանում: Եվ դա այդպես է, քանի որ մարդուն նախապես տրված է «իմացության դառնապատիր պտուղը» ճաշակած իր նախնիների փորձը:

«Գարուն» 1984, N3



## ԳԵՎՈՐԳ ԶԱՅՐՅԱՆ

Սիրելի Գագիկ, «Սովետական գրականություն» ամսագրում եւ «Գրական թերթում» կարդացի քո սոնետներն ու տրիոլետները: Վերջին շրջանում քո

սերնդի բանաստեղծներից շատերը «նորածեղություն» մոլորություններից վերադառնում են պոեզիայի դարավոր հունը: Այդ վատ է: Միայն պիտի ափսոսալ իզուր կորցրած ժամանակի ու վատնած ենթոթիայի համար: Նրանք հիմա կրկնակի, եռակի ջանքեր պիտի գործադրեն, որ մի բան ասվի: Երեւի ոճանց չի հաջողվի, քանզի տարիքի ու տաղանդի հարց կա: Դե մտքի ու ձեւի ճամարտակությունները նրանցից մեծ բան չեն խլել, մինչդեռ իսկական արվեստը չի տրվում առանց քրտինքի ու տառապանքի: Չթաքցնենք, քո առաջին գիրքը եւս գուրկ չէր «Նորածեղություն» շորշուփներից: Բայց, արդարությունը պահանջում է ասել, որ այնտեղ «հիմն» ավելի շատ էր, քան «նորը», պատահական չէ, որ դու արժանացար Պարույր Սեւակի խրախուսանքին: Դու այս նոր գործերում կանգնած ես իսկական պոեզիայի ճանապարհի վրա, որը ինչքան հնամուտ է, այնքան ավելի է նորանում: Ինձ զարմացրեց քո տեխնիկան, բառացանկը, խոր է հաստակ մտածողությունը, հայրենասիրության լիցքը, լավատեսությունը. մի խոսքով, բոլոր այն բաները, որոնք պետք են մեր պոեզիայի համար:

28 ապրիլի 1984թ.

# Շնորհավորանքի գիր

## ՄԱՂՎԱԼԱ ԳՈՆԱՇՎԻԼԻ

Վրաստանի գրողների միության նախագահ

## ՌԵՎԱԶ ՄԻՇՎԵԼԱՉԵ

Շոթա Ռուսթավելու անվան պետական մրցանակի դափնեկիր



Շնորհապարտության զգացումներ է հարուցում Գագիկ Դավթյանի ներդրումը վրաց-հայկական գրական կապերի ամրապնդման գործում: Գործ, որին ծառայում է նա՝ եղբոր նվիրումով: Գագիկը պատշաճի խոսքեր չեն արանք: Նրա հավատարմության ակունքները

գալիս են տասնամյակների հեռվից եւ, ոչ թե չեն պտտրվել երբեք, այլ գնալով ավելի ու ավելի են զուլավում: Որքան վառվածք, նույնքան լռակցաց ու անհավակնոտ երիտասարդ էր, երբ առաջին անգամ եկավ Վրաստան՝ մասնակցելու պոեզիայի համամիութենական փառատոնին: Եկավ ու տուն վերադարձավ հաղթանակով: Իսկ հավակնորդները բազում էին ու բազմազգի: Նա ոչ թե արժանացավ, այլ նվաճեց մեր կառավարության Վլադիմիր Մայակովսկու անվան մրցանակը: Նվաճեց ու սիրեց Վրաստանը, սիրեց նրա բանաստեղծական խոսքի նորոգյա մշակներին: Այդ սիրո առողջ պտուղները՝ վրաց սերնդակիցների գործերի հայահունչն ու համահունչ վերակերտումների իր հեղինակած անթուղիաները տարիներ հետո պակասեցին Վրաստանի գրողների միության թարգմանական բարձրագույն մրցանակով, որ կրում է Իվանե Մաչաբելի Մեծի անունը:

Մենք միասին շատ ճանապարհներ ենք «կծկել» թե՛ իր Վրաստանում, թե՛ մեր Գայաստանում, հասել ենք մինչեւ իր ծննդավայր դրախտային Կապան, վկա եղել, թե մարդիկ ինչպիսի գորովանքով են ընդունում իրենց զավակին:

Պահն է խոստովանելու՝ նաեւ մեր սիրելին է Գագիկը՝ անակնկալ հայտնությունների պոետն ու անգուգական ուղեկիցը: Մերը, որ վայելում էր նա վրաց գրողական ընտանիքում, վաստակած սեր է: Մենք շատ բարձր ենք գնահատում նրա «Արեւն ու մենք» վրացերեն գիրքը, որ վաղուց արդեն մատուցադիտական հազվագյուտ նմուշ է մեզանում:

Գրականության մեր հարազատի, շտապում ենք «զաղտնագործել» իր շուտով թրջված լույս կտեսնի իր բանաստեղծական նոր ընտանիքին, եւ Գագիկ Դավթյան անվանը քաջածանոթ վրաց ընթերցողը հեթական անգամ հնարավորություն կունենա վայելելու ճշմարիտ պոեզիայի հաճույքը: Մեր ազգային բարեկամին ու մտերիմ ընկերոջը մաղթում ենք լեռնցու երկարակեցություն, ստեղծագործական նոր թռիչքներ եւ ընթերցողական չխանորդ սեր:

# Վարք Բարիկի՝ որդվո Այունյաց իշխան Անդրովկի

## ՄԱՍՆ Ժ

Եվ ճնկի իջավ Բարիկը դարձյալ, գոհության խոսքեր շնչաց Աստուծուն, եւ ամեն գիշեր աղոթում էր նա ամենքի համար, ամենքից ծածուկ,

«Տեր, այս աշխարհում քո արդարության հույսով է ապրում մեր փոքրիկ ածուն, ուրեմն ինչո՞ւ ես սասանում հույսը թեզ հուսացողի, մի՞թե աղ չկա մեր պարտա հացում...»

Տեր, նայիր մի պահ մեր փրկմանը ինչ խամրած աչքերին, եւ շշուկներին մեր պաղապանաց ունկնդիր եղիր, մի՞թե քո քիմքին հաճելի է, Տեր, մեր խոցված սրբի դառնությունն անհուն եւ ողբակեզ արյունահեղի... Քննեցիր դու մեր ոգին ծածկաբար,

երկյամունքն ու սիրտը քննեցիր, եւ սրբամենա սրբությունով փորձեցիր դու մեզ, չխռովեցինք քեզանից սակայն եւ չեղանք երբեք պարսկաբանագանգ, անդարձ մոլորյալ հավաքակրոնյա հոգիների պես, այլ խնկարկեցինք, երկրպագեցինք անունդ, Գովյալ,

լուրջամբ արանց, շուրթերով կանանց, հայացքով մանկանց, սաղմոսերգեցինք դավթյան սաղմոսով գորությունը քո հրեշտակարեն կաթնկեր փորոց բերանով անգամ... Տեր, քաղցր պահիր աչքդ մեզ վրա, դավանավորն ենք մենք քո հավաքի, Տեր, յուզ մի քսիր սրբին այսպաշար եւ զարմը վարի հարիր արմարից... Հալածիր,

Տեր, քաղցր պահիր աչքդ մեզ վրա, դավանավորն ենք մենք քո հավաքի, Տեր, յուզ մի քսիր սրբին այսպաշար եւ զարմը վարի հարիր արմարից... Հալածիր, Տեր, բարի գիշեր,

Գթած, փեղաբարարալիք ցավ ու վշտերի, թողը խափարի ու շուքը մահվան երկնքից վանիր, խափանիր, Արարար, կորստյան խորհուրդն ամբարիշտների եւ թուռոք լեզուն կպցրու քիմքին ամբարտապանի...


Հսկիր ոճրարար մրբերը նրանց եւ նրանց հանդեպ եղիր աններում, խճճիր, Վերին, ուրբերը նրանց իրենց հորինած որոզայթներում, եւ գորությունը ցուցանիր նրանց քո փերունական հրաշք սականի, Տեր, այնպես արա, որ ցնդեն հավաք աղբյուրները մեր ողբ ու կականի...

Տեր, բարի գիշեր,

խաղաղ գիշեր ենք ուզում քեզանից, որ վրակները մեր երազների խառնվեն իրար ու դասնան գեղեր, որ խորշակահար փոխնածառը մեր ընձյուղ փա կրկին ափունքին նրանց, եւ ընձյուղներին մշտնջենական լույսը բողբոջի գիշերվա մեջ, Տեր,

լույսը խափանված, լույսը վիրավոր ու սմբակահար, լույսը որպես գիր ու որպես աղոթք ու որպես ցոյլան, լույսը որպես սեր, լույսը որպես խիղճ ու որպես մանուկ, եւ ուզում ենք, որ անվրդով լինի առավոտը մեր հանապազօրյա... Տեր,

բերկրություն փուր մեզ այնքան փարի, որքան աշխարհում փրեւել ենք չարիք, փուր խաղաղություն մեզ այնքան դարեր, որքան աշխարհում լույս ենք արարել:»



## ԳՐԱԿԱՆ ՍՅՈՒՆԻՔ

# Գիրք սիրո և սիրանքի

### Գագիկ Դավթյանի «Անվերջ սկիզբ» բանաստեղծությունների ընտրանին

#### ՀՈՎԻՏԱՆԵՍ ՂԱԶԱՐՅԱՆ

Ափսոսանք են ապրում, որ ավելի վաղ չեն ճանաչել Գագիկ Դավթյան բանաստեղծին: Ինչ-ինչ հանգամանքների բերումով, ժամանակին ձեռք չեն ընկել նրա ժողովածուները, բայց ահա բարեբախտություն ունեցա՝ կարդալով «Անվերջ սկիզբը» (2007թ.), վայելել մեր արդի գրականության հարընթացի մեջ ոչ հաճախ հանդիպող կատարյալ գրքի հաճույքը:

*...Բանդեր կապերը ձեր ոտք ու ձեռքի և պարմունաներն արձակեք մեղաց, Թող ձեր մորենյակ մարմիններն ի վար իմ լույսի օրհնյալ անձրեք քեզ...*

Բացառապես ինքնատիպ այս պոետի գործերին լիովին քաջածանոթ չլինելու «մեղքս» փոքր-ինչ փարատվում է այն իրողությամբ, որ այս գիրքը վերջին տարիների գործերի հետ ընդգրկում է նաև ստեղծագործություններ նրա գրեթե բոլոր ժողովածուներից և, թեև ուշացումով, հնարավորություն ունեն կողմնորոշվելու և ամբողջացնելու իմ համոզմունքը:

Առաջին՝ «Մենախոսություն» (1980) գրքուկով նրա մուտքը գրականության մեջ և անաչառորեն ողջունել են ժամանակի ակնավոր գրողներ ու գրականագետներ Վահագն Դավթյանը, Սերո Խանգույանը, Ռուբեն Ջարյանը, Սերգեյ Սարինյանը, Դավիթ Գասպարյանը, նաև վրաց գրականության երեւելի ներկայացուցիչներ: Իսկ առաջին գրքից ավելի քան մեկ տասնամյակ առաջ հայ գրականության քննադատական և քննադատի համար միայն Պարույր Սեւակի գնահատականներն արդեն իսկ մեծ պատիվ ու բախտավորություն պիտի համարեի: Անկասկած է, որ նշածս խստապահանջ գրողները պարզապես լռությամբ կշրջանցեին, եթե Գագիկ Դավթյանը ոչ թե նոր խոսք ու շունչ բերեր, այլ շատերի նման ելներ ու որոշեր պարզապես գրականությամբ զբաղվել:

Ինքնամերտություն ու ինքնաբացահայտման առեղծվածային ուղիների ճամփորդ է նա, ամենայն ինչի հարաբերականության տիրույթներում սեփական ծավալն ու կշռույթը հայտնաբերող ու հաստատող անհատականություն՝ ինքնահատուկ ու ինքնանվաճ խորությամբ ու լուսածիր տառապանքով:

*...Ինչ է ինձ փայլու կույր ու սևամեջ, այս հոգեակեր համբերությունը, որքան փոքր եմ ես այս լույսյան մեջ, եւ որքան մեծ է այս փոքրությունը:*

...Ջերմ ու զմայլելի տրամադրություն են հաղորդում գրքի սիրո մեղեդիները:

Նա լավ գիտի սիրո քնարերգության արժեքը, ուստի վերին երկյուղածությամբ է գրիչը հպում թղթին՝ հոգու հրաբխի այդ անքննելի խառնարանին աղերսվելիս:


*...Դու՛ անկարելի, դու՛ Մոգ, Հրմա, մեկ արձակ ես դու, մեկ՝ հանգավոր, գեղեցիկ ես դու ծովի նման ու ծովի նման - վրանգավոր...*

Բանաստեղծի սիրո քնարերգությունը այնքան նուրբ ու զգայուն է, այնպիսի անակնկալ բնորոշումներ ու անցումներ ունի, որ միայն հիանալ կարելի է: Սիրո դասեր են դրանք – մաքուր, քնքալի, անզուգական...

Ուրույն ու հետաքրքիր միկրոմիջավայր է ներկայացնում «Յետաքրքրաժամ» անվանումը կրող շարքը, որի յուրաքանչյուր բանաստեղծություն տիրող բարքերի և մարդկային հոգեկերտվածքի



Վահանվանք: Ալյոշա Գասպարյան, Ռազմիկ Դավթյան, Գագիկ Դավթյան:



*...Եկ, բժշկիր մեզ, Տեր, փրկիր մեզ մեզանից, քանի շուր է, թե չէ՝ օդանավը կխորտակվի հանկարծ, եւ չի բացվի հանկարծ պարաշույրը...*

Շարքի բանաստեղծություններին բնորոշ է հումորի և սարկազմի անտրոհելի մի համաձուլվածք, որ չի պարունակում չարության ու ատելության ոչ մի տարր, բայց հստակորեն ցուցանում է երկրի և ժամանակի կնճռոտ, ամոթալի, ճղճիմ ու խեղյալ երեւույթների դեմ ճշմարիտ բանաստեղծի շիտակ ու ըմբոստ, արժանապատիվ ու թափանցիկ կեցվածքը:

Միանգամայն այլ հնչողություն ունի «Վարիացիաներ վաղնջական թեմաներով» խոհական շարքը: Այստեղ եւս ոչինչ թողարկված չէ, այլաբանություն ասած հնարքը կիրառված չէ, եւ բանաստեղծը «մարտի է զնուն» գլուխը բարձր ու աներկյուղ...  
*...Մեկն իր երագին հասնելու համար պարրասար է փայլու արյունն իր անգին, մեկն էլ չոր թախտի մեկնվել հանգիստ է գեղեցիկ է սպասում կյանքից...*

Ձգողության զանգերգություն է այս շարքը, արժանապատիվության



Գագիկ Դավթյանը Վահան Դավթյանի հետ՝ Համո Սահյանի ծննդավայրում:

ու մարդավայել գոյության հորդոր, ազնիվ ու արդարացի լինելու հրաման՝ պոետական խոսքի գույտ սեփական կառուցվածքով, տաղաչափական հնարքների ու ներշնչանքի պատկառազու ու հրամանատարությամբ:

Ընդհանրապես, Գ.Դավթյանը այն «սահմանյալ» բանաստեղծներից է, որ միկրոմիկրաբույժի խորաթափանցությամբ է հյուսում համեմատությունների համակարգը: Սա չափածո խոսքի կառուցման զգուշավորություն չէ, այլ՝ գերազանց իմացության, տաղանդի փայլատակման եւ, ի վերջո, գրողի բարեկրթության ու պատվախնդրության դրսեւորում: Այնքան նուրբ ու պատկերավոր են նրա գրչի անցումները խորքից մակերես, բարդից՝ պարզություն, սեւից՝ ճերմակ, ցավից՝ բերկրանք, որ անզեն աչքով պարզապես նկատելի չեն: Եվ հենց այդ է գրող-անհատը, նրա տարբերությունը գրիչ բռնողներից, նրա յուրակերպությունը վերջապես: Իսկ թե ինչ Գողգոթայով է անցել բանաստեղծը բյուրեղացման իր ճանապարհին, միայն նրա ճակատագրի մարդիկ կհասկանան, սեղմ ու հակիրճ խոսքով շատ բան ասելու կարողությունը քչերի մենաշնորհն է: Դավթյանը հենց դրանով է Դավթյանը:

*Երկու անգամ է սխալվում կյանքում՝ լեռնագնացը, առաջին անգամ՝ կամավ թե անկամ՝ ընտրության պահին մասնագիրություն... իսկ երկրորդ անգամ... իսկ երկրորդ անգամ ես չէր սխալվի, թե չի սխալվեր առաջին անգամ...*

Փառք Աստուծո՛ւ Գ.Դավթյանը ոչ մի անգամ չի սխալվել, ոչ բանաստեղծի իր ծանր ճանապարհն ընտրելիս, ոչ էլ այդ ճանապարհի խոչ ու խութերին հանդիպելիս: Նա իր Լեռան գագաթն է մագլցում պատվով ու զեղծությամբ: Այդ Լեռն ու հայրենի լեռնաշխարհը նա իրենց է դարձրել իր արյամբ, իր անբաղդատական սիրով, իր բանաստեղծական միկրոմով, ուստի անպետք է գերբ:

*... այս լեռնաշխարհը չեմ գրել, ինչպես գույգ կոշիկներս մահնակային փակ, ժառանգել եմ այն որպես լույս ու խիղճ, որպես պարմություն եզակի կրակ, ժառանգել եմ այն, ինչպես արյունն է մարդն իր ժառանգում...*

Գագիկ Դավթյանն անուրանալի հմուտ նավագար է նաև էպիկական ժանրում: Դրա վկայություններն են «Շարունակվող պատերազմ», «Նոստոլվանություն» և «Վարք Բաբիկի» որովո Սյունյաց իշխան Անդրկի» պոեմները: Ազգային ակունքներից բխելով հանդերձ՝ դրանք համամարդկային խնդիրներ են արժարժում: Այդ պոեմները գեղարվեստական բարձր մտածողության, լեզվի ազնվական հարատուության, յուրատեսակ ու համոզիչ բառակերտումների, նուրբ ու բարձրարվեստ տաղաչափության եւ, վերջապես, վարպետ գեղանկարչի գունածուփ պատկերավորության, համարձակ վրձնահարվածների շեշտադրության ու ներդաշնակ մեղեդայնության արգասիք են: Դրանք մոնումենտալ քանդակներ են, որ ցանկացած ժողովուրդ կուզենար տեսնել իր ազգային պոեզիայի շքամուտքում՝ իբրև հոգու վեհության ու պատկառանքի վկայություններ:

Ձորեղ դրամատիզմով առանձնացող այս գործերից առաջինը՝ «Շարունակվող պատերազմը» (1985-ին արժանացել է Վ.Մայակովսկու անվան համամիութենական մրցանակի) հավաքական ու շունչալի բողոքի մի հողմ է մարդկության մեծագույն և քստմեղի աղետներից մեկի՝ պատերազմի դեմ:

Նույն գորեղ դրամատիզմն է առկա նաև «Վարք Բաբիկի...» ասքում, որը մկրված է մեր ժողովրդի պատմության նշանակալի դրվագներից

մեկին՝ Սյունյաց իշխանների անօրինակ ընդվզումին ու դիմակայությանը պարսից նեմզ ու արյունարբու Շապուհ արքայի եւ նրա հրոսակների տեսական խարդավանքների: Մեծ կտավի այս գործն անվերապահորեն պիտի դասել հայ ժողովրդի ողբերգական անցյալը ճշմարտացիորեն ու մեծ արվեստով արտացոլող գեղարվեստական կոթողների շարքը:

Անհրաժեշտ են համարում ընդգծել, որ այս պոեմները խոր ու համակողմանի վերլուծությունների առումով կարող են գրականագետների թեկուզել ուշացած, բայց խիստ անհրաժեշտ ու անկողմնակալ ուշադրությանը:

Հայրենիքին նվիրված «Սոնետների պատկան» բանաստեղծի քնարական ներշնչանքը հասնում է հուզականության ու հոգեբանական ներթափանցումների բարձրակետին: Հայրենիքի պաշտամունքն այստեղ վերածվում է քրմական ծիսականության, ներսղ լցվում է աստվածային լույսով ու երածշտությանը, աչքիդ առաջ քո հայրենիքը մի հերթական անգամ գտվում-բյուրեղանում ու խառնվում է արյանդ, կալանում-գերում ու բարուրում է քեզ անչափելի սիրով: Ծնրադիր աղոթք է այն, աստեղային մեղեդի, որի դողացները շարունակում են ծփալ ու ծավալվել նաև ընթերցումն ավարտելուց հետո:

*... Լինելության հիմքը վսեմ, քո շուրթերից սերածան, մի ափսայուրծ արձագանքով խորքն է հասնում դարերի եւ այնպես է փառաբանում ապրելու կյանք վերին, որ համրանում-քարանում են ժամանակները դաժան...*

Հայրենիքի հանդեպ սիրո դրսեւորման ամեն արտահայտություն չէ, որ մղում է ցեծագին բացականչության, թե այդպես կպիրեն հայրենիքը: Իսկական սերը նման է ճշմարտության՝ կա կամ չկա: Գ.Դավթյանը տալիս է ինձ ցեծագին բացականչության այդ իրավունքը, հարկադրում խոնարհվել իր օրինաբանած հայրենիքի առջեւ: Նրա «Սոնետների պատկան» մի ուրիշ, նորաշուք պատկան է օժտում հայրենիքի լուսե ճակատը, տակավին չգործված ծիրում է հայտնագործում նրա գույներն ու թրթռները, խորհրդավոր ու արեւատաք շերտեր մեկնում նրա ոգեղեն խորքերից, սրտի մեջ քննում-հղովում եւ ավի մեջ մատուցանում հայրենիքը՝ ամբողջական նկարագրով: Այստեղ եւ ցավն է գեղեցիկ, եւ տառապանքն է թովիչ, եւ ողբերգությունն է ասպետական, եւ լռությունն է խոսուն, եւ լույսն ու հնչյունն են անզգրական:

Ավետյաց երկիր մեր հայրենիքի խոշոկալ-վսեմ ճակատագիրը սոնետների այս համանվագ-ներդաշնակ սահանքով արտացոլվում է ժամանակի բոլոր չափումների խորապատկերում եւ տիեզերական տարածության անընդհատ ինքնածավալման խորհրդավոր պատրանք է արժարժում:

Ցավի եւ քնքրության, ինքնայրման ու տառապանքի, սիրո եւ սիրանքի բանաստեղծ է Գագիկ Դավթյանը, պատկերավոր-սթափեցնող-կլանող խոսք ու գրի, խոր ու ազնվական բանաստեղծի վեհաշուք տերն ու անմվաստ ծառանք...

Եվ այն բնորոշումը, որ անողորմ ետի նշանադրությամբ արձակել է Իբսենը, վերաբերում է նաև Գագիկ Դավթյանին. «Լինել բանաստեղծ, նշանակում է ի կատար ածել ինքնադատաստանը»: Անավել քան խոսուն է նաև մեր բանաստեղծի ինքնաբերականը. «Ո՛վ է լսել, որ կացինն իր... կոթը տաչի»:

Այսպես տեսա «Անվերջ սկիզբ» գիրքը եւ նրա հեղինակին:

«Գրական թերթ», N19, 4 հունիսի 2010թ.

